դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 60-ապատիկի չափով:

Տվյալ դեպքում, հայցվորը հայց ներկայացնելիս վճարել է պետական տուրքի անհրաժեշտ չափի գումար, սակայն գործի քննության ընթացքում չի ներկայացրել գրավոր միջնորդություն՝ դատական ծախսերի պահանջների վերաբերյալ, հետևապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ընդ որում, վերոնշյալի, գործի քննության ընթացքում դատական այլ ծախսերի հետ կապված պահանջների մասով գրավոր միջնորդություն ներկայացված չլինելու և գործի քննության հետ կապված այլ ծախսերը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում Դատարանը կարծում է, որ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

VI. Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

ՎՃՌԵՑ

1. «ԱԼՖԱ ԼԵԳԱԼ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող «ԵՐԵՎԱՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ ԵՐԵՎԱՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կարիքների համար էնդոպրոթեզների մատակարարման նպատակով հայտարարված ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/36 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Ազատ Դունամայյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEB4-553F-4C42-94F7 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am